Concern Dialog

Ծանուցման նոր եղանակներ, ակնհայտ անհիմն հայց, վերաքննիչ վարույթին առնչվող կարգավորումներ. վերջին փոփոխությունները քաղաքացիական դատավարությունում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության (**այսուհետ՝ օրենսգիրք**) օրենսգրքում վերջին մի քանի ամիսների ընթացքում կատարվել են մի շարք էական փոփոխություններ: Փոփոխությունների մի զգալի մաս ուժի մեջ է մտել 14.03.2024 թվականից՝ ներառված լինելով «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-82-Ն օրենքում: Այս նյութում անդրադարձ կկատարվի այդ փոփոխություններից մի քանիսին:

Այս նյութը չի անդրադառնում 28.02.2024 թվականին «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումների կատարելու մասին» թիվ ՀՕ-117-Ն օրենքով նախատեսվող նոր հատուկ վարույթի՝ առանց անձի համաձայնության հիվանդության օջախ մուտք գործելու, դեպքի և (կամ) օջախի համաճարակաբանական հետազոտություն (հետախուզություն) և (կամ) կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին, որոնք ուժի մեջ կլինեն 27.09.2024 թվականից, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.04.2024 թվականի թիվ ՀՕ-171-Ն օրենքում «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին, որոնք ուժի մեջ են մտնելու 01.07.2024 թվականին, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 02.05.2024 թվականի թիվ ՀՕ-222-Ն օրենքով նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 11.04.2024 թվականի ՀՕ-193-Ն օրենքով «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած լրացումներին և փոփոխություններին: Նշված օրենքների շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած փոփոխություններին և լրացումներին կանդրադառնանք լրացուցիչ՝ առաջին հրապարակումներով:

1. Դատական ծանուցման նոր եղանակներ.

Դատարաններն այսուհետ կարող են իրենց վարույթում գտնվող գործերով ծանուցումներն իրականացնել նաև

դատական ծանուցագիրը հեռախոսակապով (այդ թվում՝ տեքստային հաղորդագրության) կամ էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով): Սակայն դատարանը այսպիսի եղանակով ծանուցումը կկարողանա անել, եթե կողմն ինքն է դատարանին այդ նպատակով տրամադրել իր հեռախոսահամարը կամ էլեկտրոնային հասցեն:

Դատավարական փաստաթղթերը նույնպես հնարավոր կլինի ուղարկել կամ ստանալ առնվազն էլեկտրոնային հարթակով (ինտերնետային կայքով, էլեկտրոնային հավելվածով կամ համանման այլ միջոցներով), եթե կապի նշված միջոցի տվյալները կողմը դատարանի տրամադրել է ծանուցումներ ստանալու նպատակով:

2. Հայցային վաղեմության միջնորդության քննության նոր առանձնահատկություններ

Դատարաններին տրվել է հնարավորություն իրենց վարույթում գտնվող գործերով հայցային վաղեմության միջնորդության քննությունը սկսել/անցկացնել կողմերի բացակայությամբ:

Հայցային վաղեմության միջնորդությունները, ինչպես և նախկինում, կարող են ներկայացվել բոլոր կամ առանձին հայցապահանջների նկատմամբ: Եվ եթե նախկինում առանձին հայցապահանջի դեմ ներկայացված հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը անվերապահորեն հանգեցնում էր գործից մասի առանձնացմանը և միջնորդության քննությանը, ապա այժմ գործից մասի առանձնացում կարող է չլինել ու դատարանը կարող է միջնորդության անդրադառնալ գործի ըստ էության քննության արդյունքով կայացվելիք եզրափակիչ դատական ակտով, եթե

1. Դատարանն իր հայեցողությամբ գտնում է, որ չի բխում գործի քննության արդյունավետությունից, կամ
2. Գործին մասնակցող անձինք համաձայն են դրան:

3. Ակնհայտ անհիմն հայցի պայմանների սահմանում.

Դեռևս 27.12.2022 թվականին օրենսգրքում կատարվեց փոփոխություն՝ թույլ տալով գործը քննել արագացված դատաքննության կարգով այն դեպքում, երբ հայցն ակնհայտ անհիմն էր:

Ու թեև, կամ այն պատճառով, որ, դատարանները այդքան էլ հաճախ չեն կիրառում գործը արագացված դատաքննության կարգով քննելու կարգը, օրենսդիրը սահմանեց այն դեպքերը, որոնց առկայությունը խոսում է հայցի ակնհայտ անհիմն լինելու մասին, այն է՝

1. Հայցն ակնհայտ ոչ իրավաչափ է՝ ակնհայտորեն ենթակա է մերժման՝ անկախ դրա հիմքում դրված փաստերից.
2. Հայցի հիմքում դրված փաստերի հիման վրա հայցն ակնհայտորեն ենթակա է մերժման.
3. Հայցը ներկայացվել է ոչ պատշաճ հայցվորի կողմից կամ ոչ պատշաճ պատասխանողի դեմ:

4. Երրորդ անձինք

Նախատեսվել է դատարանի կողմից որպես երրորդ անձ ներգրավելու

ծանուցում ստացած անձի գործի նյութերին հասանելիություն ստանալու հնարավորություն, բացառելով գաղտնի տեղեկատվության հասանելիությունը մինչև դատավարական կարգավիճակի տրամադրումը:

Սահմանվել են երրորդ անձանց կողմից ներկայացվող հայցադիմումների նկատմամբ հավելյալ պահանջներ և կարգավորումներ:

Ընդ որում այս փոփոխությունները տարածվելու են 14.03.2024 թվականից հետո հարուցված գործերի նկատմամբ:

5. Հայցադիմումի վերադարձն ու դրա բողոքարկումը.

Ոչ միատեսակ դատական պրակտիկան այսուհետ պետք է սկսի համապատասխանել օրենսգրքով սահմանված նոր կարգավորումներին: Եթե դատարանը հայցը վերադարձրել է, և հայցվորն օգտվել է հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը բողոքարկելու իր իրավունքից, ապա հայցվորը ստիպված կլինի սպասել մինչև վերաքննիչ ատյանում ավարտվի իր բողոքի վարույթը: Իսկ եթե հայցը վերադարձրել է, և հայցվորն օգտվել է դատարանի մատնանշված թերությունները շտկելու և հայցը կրկին ներկայացնելու իրավունքից, ապա առաջին ատյանի դատարանը իրավասություն կունենա անդրադառնալ կրկին ներկայացված հայցադիմումի վարույթ ընդունելու հարցին:

6. Վերաքննիչ դատարանի դատական ակտի հրապարակման ժամկետի երկարաձգման հնարավորությունը

ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանին ընձեռնվել է նույն հնարավորությունը, ինչ և առաջին ատյանի դատարաններին՝ վճռի հրապարակման ժամկետը երկարաձգելու հնարավորության առումով: Ինչպես և առաջին ատյանի դատարանները վճիռը հրապարակելիս, վերաքննիչ քաղաքացիական դատարանը կարող է որոշման հրապարակումը երկարաձգել մինչև 15 աշխատանքային օր, *«երբ առկա են դատավորի կամքից անկախ օբյեկտիվ հանգամանքներ, որոնք անհնար են դարձնում հայտարարված ժամկետում որոշման հրապարակումը»:*

7. Վերաքննիչ դատարանի կողմից անվերապահ բեկանման հիմքերի վերաբերյալ կարգավորումներ.

Նախկինում գործում դատական նիստի արձանագրության բացակայությունն ինքնին հանգեցնում էր վերաքննիչ ատյանի կողմից առաջին ատյանի կայացված վճռի անվերապահ բեկանմանը: Նոր կարգավորումների համաձայն դատական նիստի արձանագրության բացակայությունը կհանգեցնի վճռի բեկանմանը, երբ արձանագրության բացակայությունն անհնար է դարձնում բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը պարզելը, եթե հնարավոր չէ արձանագրությունը վերականգնել հատուկ համակարգչային ձայնագրման համակարգից:

Վերոնշյալ փոփոխություններին կարող եք ծանոթանալ <u>այստեղ</u>: